Gymnasiumbibliothek

891.710
4-80

30 MAY 2011

891.71
Կ-80
Կ

Ի. ԿՈՒԼՈՎ

# ԱՌԱԿՆԵՐ

ՊԵՏՀՐԱՏ 1938 ԵՐԵՎԱՆ

3868

24 MAY 2013

2336
38

# ՀԱՄԵՐԳ

Պիկ, պիկ,
Մեծ ծաղրածու մի կապիկ,
Եշը,
Այծը
Յեվ էլ արջը ծուռ թաթիկ—
Ուզեցին տալ մի համերգ.
Իսկույն ընկան վոտ ու ձեռք,
Թե վորտեղից, հազիվ-հազ
Գտան բերին նոտա, բաս,
Ալտա, յերկու հատ ջութակ,
Նստան հովտում, ծառի տակ՝
Գերել իրենց բուն ձիրքով
Արար-աշխարհ բովանդակ։

Ճը՛զը, վը՛զը, խը՛փ, խփոց,
Կընտ, կընտ, կնտնտոց...
Բան դուրս չեկավ համերգից.
Պիկպիկն եղտեղ դուրս շարքից.
—Ե՛, մեր տղերք... Է, դաղմր,
Սա ինչ գործ է կեսկատար.

Յեկեք ճիշտ կարգ հաստատենք,
Այնպես նստենք՝ վիստվիստենք։
Մի խոշ, ալտի դեմ բասով,
Միայն վիստ, վիստ հավասով
Յես եվ յերկրորդ Ջուլթակի.
Ճիշտը, առանց կատակի
Այս է, պար-պար հավասար
Պար կբռնեն անտառ, սար։

Նրանք յեղան տեղափոխ,
Բայց համերգն է անփոփոխ,
Նորը՝ դարձյալ
Հինն է անցյալ։

Տղերք, հերիք...
Քթից բերիք,—
Եշը զռաց.—
Քիչ սպասեք,
Ուզեմ ձեռաց
Յես իմ գտած հնարքով.—
Պիտի նստենք մի շարքով։
Լսելով եշ քեռուն՝
Անուն, անուն
Մեծի կարգով
Շարվան շարքով
Լուրջ... վայելուչ,—
Գործն ելի փուչ։
Խմբի մեջ կռիվ, վեճ,



Ծուլի, ծուլի.
Առաջվանից եվ ավելի
Վեճը խիստ եր—
Ով վոնց նստեր։
Պատահեց սոխակին
Ներկա լինել աղմուկին։
Նրանք չորսով
Աս ու խոսով
Յեկան աղաք,
Ասին՝ սոխակ,
Դու մեզ ների,
Քիչ համբերի,
Մեր ես գործը կարգի դիր
Մեր կասկածը փարատիր։
Նոտա եվ կա և չորս գործիք Ջոկ-տարբեր,
Միայն ասա ինչպես նստենք, մեր ախպեր։
Սոխակը թե՝ ասեմ ճիշտ—
Վոր դուք դառնաք յերաժիշտ,
Ձեզ պետք է ձիրք, նուրբ ականջ—
Մի հասարակ, պարզ պահանջ։
Իսկ դուք, իմ բարեկամներ,
Հիմա և այլ անգամներ
Ինչպես եվ վոր չնստեք,
Քաշեք, քսեք, քսմստեք,
Դուք յերաժիշտ դարձող չեք։

---

# ԳԱՅԼՆ ՈՒ ԿՌՈՒՆԿԸ

Վոր գայլն է ագահ—
Եդ մասին խոսք կա.

Գայլն ուտելիս
Վոսկորն էլ է կուլ տալիս։
Վայն յեկավ գայլի մեկին,
Վոսկորը կանգնեց բկին.
Քիչ եր մնում նա խեղդվեր,
Ես աշխարհից միշտ գաղթվեր։

Բայց բախտից մի կռունկ կը՞ռ...
Դեպի ծառը յեկավ թը՞ռ...
Նշաններով գայլը նրան
Խնդրեց, վոր գա փրկի իրան։

Կռունկն յեկավ։ Քթիցը վիզ
Սուր կտուցը մի քանի թիզ.
Գայլի բկով վոր ներս խոթեց,
Վոսկորն հանեց, դեն շպրտեց.
Հետո խնդրեց աշխատավարձ։

—Սա կատակ չի, ես ինչ հարց,—
Նենգ գազանն է մռնչում,
—Ա՛յ, ապերախտ կույր թռչուն,
Հիմար, անմիտ,

Են հերիք չէ՞, վոր քիթ ու ճիտ
Հիմար գլխով տեղումն ամբողջ,
Վողջ և առողջ
Կոկորդիցս դուրս քաշեցիր,
Վերջն էլ, մի տես, ինչ հիշեցիր։
Զքվի՞... էլ ինձ չհանդիպես...
Թե չե սևից սև կկապես։

## ԿԿՈՒՆ ՅԵՎ ԱՔԼՈՐԸ

—Ջնաշխարհիկ
Իմ աքլորիկ,
Ձայնդ զիլ-զիլ,
Վոսկի ծիլ-ծիլ։
Յերգերիդ մեջ
Բյուր յելևեջ։

—Կկո՛ւ քուրիկ,
Հուրիկ, բուրիկ,
Քո ձայնն էլ ե
Լավ գեղգեղում,
Ծոր ե տալիս
Ու մղմղում։
Յերգ եմ լսել
Յես շատ ու քիչ,
Բայց չեմ տեսել
Քեզ պես յերգիչ։
—Իմ ընատուր
Վոսկեփետուր,



Կուզեմ
Լսեմ
Ձայնդ անսպառ,
Մի՛շտ, անդադար։

—Պուճպուճուրիկ
Մի պուտ ջրիկ
Կկու քուրիկ,
Յերդվում եմ յես՝
Վոր լռում ես
Եսչափ պուճուր,
Սպասելով
Իմ աչքերը
Կտրում են ջուր։

Վիրտեղից ե
Քեզ եդպես ձայն,
Մաքուր, քնքուշ
Ու զնգզնգան։
Դուք եդպես եք
Ամբողջ ցեղով։
Մի բուռ բան եք
Թեև տեղով,
Բայց ձեր յերգը
Շատ հաջողակ,
Զունչ, չունչ
Վոչ մի սոխակ։

—Գոհ եմ քեզնից,
Զիվանն աքլոր,
Խղճով ասենք,
Դու միալար
Լավ ես յերգում
Դրախտահավից,
Թռչունների
Լավի լավից։
Վողջ աշխարհը
Խոսքիս վկա,
Քեզ պես յերգիչ,
Չկա՞, չկա։

Եղտեղ ծիտը,
Ծիտիկ-միտիկ,
Ասավ։—Հլա
Սրանց մտիկ,
Ի՞նչ լավ գիտեն
Իրար յեղել,
Ասա՝ թողնեն
Պակաս տեղ եք։
Ե՛, լավ, հերիք
Իրար գովեք,
Աշխարհ գիտե,
Թե դուք ով եք,



# ԿԱՊԻԿՆ ՈՒ ԱԿՆՈՑՆԵՐԸ

Ծերացել եր կապիկը,
Լավ չեր տեսնում պապիկը։
Բայց հասել եր ականջին,
Թե արատ է դա չնչին,
Պիտի գնել լոկ ակնոց։
Գնաց, ճարեց մի կապոց...
Ակնոցները, հինգ թե վեց,
Ե՛ս կողմ, ե՛ն կողմ շուռ տվեց։
Մին դնում եր նա գլխին,
Մին ել պոչի մեջտեղին,
Մին լիզում եր թքոտում,
Մին ել սրբում, հոտմտում
Հա փորձում եր, հա փորձում...
Ակնոցները չեն գործում,
Են պապղուն ապակին
Լույս չի տալիս պապիկին։
—Կորչե՛ն,—գոռաց—ջուխտ ու կենտ...
Նա յե հիմար, նա յե խենթ,
Ով լսում է շատ-շատին,
Մարդկանց հազար մի ստին։
Սրանց մասին,
Ինչ վոր ասին՝
Սո՛ւտ է, սո՛ւտ,
Ես ապակին

Խավար աչքին
Ի՞նչ ոգուտ։

Յեվ սրանեղած ակնոցները
Ենպես չփեց չոր քարին,
Վոր ջուր կորած ցալտունները
Կանաչ-կարմիր կապեցին։

## ԳԱՅԼՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Գայլն անտառից
Փախավ դեղը։
—Նեղն եմ, նեղը,—
Ասավ կատվին,—
Ասլան բալա,
Քո հոր պատվին
Մի ճար արա։
Մի տես հլա՝
Վորսորդ ու շուն
Թազի, թուլա
Միսա են կրծում,
Ինձ հալածում։
Ա՛յ կորվի
Դրանց հոտը,
Մի մարդ ցույց տուր՝
Պահվեմ մոտը։

—Ա՛յ ցեղակից,—
Գոչեց կատուն,—





Գնա մութը
Մարոյենց տուն,
Նա չափազանց
Բարի կին է։
—Յես էլ գիտեմ,
Վոր անգին է,
Բայց վոր նրա
Հորթն եմ կերել։

—Բկիդ կանգներ,
Լավ չես արել.
Վոր եդպես է,
Այ ամաչկոտ,
Հովսեփի մոտ։

—Ե, ինչ ասեմ,
Ես ամառը
Նրա գառը...

—Ո՞ւմ ասեմ էլ,
Հա, մեր Զաքին։

—Ես գարնան էլ
Նրա մաքին...

—Ո՞վ մնաց էլ.
Հա, երեցը։

—Ես աշնանն էլ
Նրա եծը...
—Այ դու ուտես

Զոռի մեծը.
Քանիսն յեղավ...
Հինգը, վեցը...
Ա՛յ անամոթ,
Ի՞նչ յերեսով
Դու գեղ մտար,
Ի՛նչ ե, ուրիշ
Տեղ չգտար...
Գյուղն հիմար ե,
Վոր թշնամուն
Պատսպարե։

Ով ինչ բրթե,
Են կխրթե։

## ԿԱՊԻԿՆ ՈՒ ՀԱՅԵԼԻՆ

Իրեն տեսնելով
Հայելու միջին,
Կապիկը վոտով
Մի բոթեց արջին։

—Քեռի, սրան տես,
Սա ո՞վ ե... գիտե՞ս։
Ես ի՞նչ ռեխ ե,
Կնճռոտ տրեխ ե,
Հրե՛շ, ցուցանք,
Պատի՛ժ, փորձանք։



Ինձ տեղն ու տեղ
Կապանեյի,
Թե քիչ սրան
Յես նմանեյի։

Բայց թե յես ել
Ինչո՞ւ հետ եմ,
Եղպես ցուցանք
Քչի՞ն գիտեմ.
Թվեմ զատ-զատ...
Մերոնց մեջ շատ...
— Քան թե թվես
Ձերոնց զատ-զատ,
Լավ չե՞ նայես,
Խելո՛ք, վրադ.—
Են գարշելուն
Արջը ասավ.
Բայց թե խոսքը
Տեղ չհասավ։

2336/38

## ՓԻՂՆ ՈՒ ՇՆԻԿԸ

Փողոցներով փղին եյին ման ածում,
Հավանորեն ցուցադրում—
Հայտնի յե, վոր նորություն ե փիղը մեզ մոտ,—
Ահա յեկել ու նայում են անգործ մարդիկ։
Վորտեղից ուր մի չար շնիկ վազեց հերստոտ,
Տեսավ փղին, հաջեց սաստիկ.





ՊԵՏ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԳՈՍ. Ս-ՏԻ. ԵՐԵՎԱՆ ՀԱՅԿ-ՍՍՀ Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Դես ընկավ, դեն, վեր-վեր ցատկեց ու ճղճղաց,
Յեվ ուզում եր կռիվ անի բացե ի բաց։
«Եհ, խայտառակ մի՛ անի քեզ,—
Ասաց մի շուն,—դու ի՞նչ ես վոր փղին հաղթես.
Տե՛ս, թե վոնց ես դու խոպոտում, բայց իր ճամփան
Անց ե կենում նա անխափան,
Քո հաչոցն ել չի նկատում»։
«Վա՜հ, տնաշեն,—շնիկն ասաց,—
Յես ել եղքան չարչարվում եմ, ինձ կտրատում,
Վոր հենց եսպես—կռիվ չարած
Անուն հանեմ իբրև հայտնի մի կռվարար։
Թող շներն ել պատմեն իրար—
Այ, քեզ շնիկ, տեսեք հապա ինչ քաջ ե նա,
Վոր հաչում ե փղի վրա»։

## ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Թռի-վռի
Մի ճպուռ,
Վողջ ամառը
Շուռ ու մուռ,
Յերգեց, ճռռաց,
Ճռճռաց։
Մին ել, ըհը՞,
Ձմեռը,
Փռեց իրա
Թևերը.
Բացեց գորգը





Սպիտակ,
Դաշտերն առավ
Զյունի տակ։
Անցան պայծառ
Որերը,
Եվ վիրն ասեմ,
Եվ վիրը,
Դերը ամեն մի
Թվի տակ
Թե սեղան կար,
Թե ոթյակ։
Յեկան որեր
Ցրտաշունչ,
Ճպուռն ընկավ
Լուռ ու մունջ.
Քաղցած փորին
Եվ ինչ յերգ,
Ցուրտը տարավ
Վոտ ու ձեռք։

Զընգը-զընգը
Դողալով,
Ծանր-ծանր
Սողալով
Նա մրջյունին
Ասում եր.
— Գլխիդ մատաղ,
Սանամեր,

Մի ճար արա
Շունչ առնեմ,
Յրտից, սովից
Զմեռնեմ.
Կերակրի՛,
Տաքացրու,
Մինչև գարուն
Ապրեցրու։
—Ի՞նչ խաբար է,
Սանիկս,
Զարմանում եմ,
Զանիկս,
Զաշխատեցի՞ր
Ամառը,
Ասա, ի՞նչ եր
Պատճառը։

—Եղպես բանի,
Սանամեր,
Էլ ժամանակ
Ո՞վ ուներ.
Են խոտերում
Բուրավետ
Յերգում էյինք
Մերոնց հետ...
—Ուրեմն դու...
—Այո՛, յես
Վողջ ամառը



Դեն ու դես
Յերգում էյի
Մշտապես։
—Յերգո՞ւմ էյիր...
Շատ բարի,
Այժմ էլ բռնի
Վեր-վերի,
Քամին ծափ տա,
Դու պարի։

## ԳՈՐՏՆ ՈՒ ԿՈՎԸ

Գորտը գորտին ասավ.
—Քեռի՛,
Խնդրեմ ես կողմ
Մի յետ դառի.
Տես ուռե՞լ եմ,
Փուքն առե՞լ եմ.
Ուղիղն ասա,
Կովին հասա։

—Զուր է, վե՛րջ տուր,
Կոմշ ուր, դու ուր...

—Հիմի՞, քեռի,
Ուռա՞ իսկի։

—Շատ չեն զոռի,
Նույնն ես, սրսկի։



— Մի տես, քեռի։

— Նույնն ես, լռի։
Աշխարհ կանցնի,
Յերթե գորտը
Կովին հասնի։

— Ա՛յ, տե՛ս, քեռի։

— Թեկուզ մեռի,
Դու բաց աչքով
Չես դառնա կով։

Գորտը ուռավ,
Փքվեց նորից,
Խիստ փուք առավ,
Ճաքեց զոռից։

Ով վոր փքվի,
Նա կչքվի։

## ԱԳՌԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Բախտի բերմամբ,
Թե պատահմամբ,
Մի մեծ ագռավ
Մի գունդ պանիր
Դաշտում գտավ,
Կտուցն առավ,
Ծառին թառավ։

Ո՞, ինչ պանիր...
Դեղին վոսկի...
Բայց դեռ չառած
Համը խսկի՝
Աղվեսն անցավ
Ծառի մոտով,
Գերվեց,
Երվեց
Պանրի հոտով։

Վազեց, գնաց
Բերնի ջուրը
Յեվ թուլացան
Կուռն ու ճուռը։
Են ժամանակ
Իրա ձևին,
Ծառի տակից
Աչքն ագռավին,
Հեզիկ, նազիկ,
Փափկամազիկ,
Բացեց լեզուն
Անուշ-մեղուշ,
Թափեց, չափեց
Շաքար ու նուշ։

— Ի՞նչքան լավն ես,
Յես քո գերին,
Քո եդ սևիկ



Վառ աչքերին,
Նուրբ ծալքերով
Զույգ թևերին։

Մի դու մտիկ,
Ե՛դպես քթիկ,
Եդպես ճտիկ.
Մախմուր ագին,
Խաս ու դումաշ
Ատլասն հագին։
Գիտեմ, անշուշտ՝
Իմ քուրիկի
Ձայնն ել կըլի
Հրեշտակի։

Յերգի՛, քուրիկ,
Մի՛ ամաչի,
Իմ ուզածը
Մի մեծ բան չի։
Թե վոր չքնաղ
Եդ տեսքիդ հետ
Յերգելում ել
Յեղար վարպետ,
Ո՞, կդառնաս,
Իմ մաքրուհի,
Թռչուններիի
Մայր թագուհի։

Ագռավ ագին իրեն տված
Գովեստներից շշմած, ուռած,

Ագռավային
Բկռվը մին,
Վոր չկռռաց՝
Պանիրն ընկավ ծառիցը ցած,
Շողոքորթը ռխեց, գնաց։

## ԿԱՏՈՒՆ ՈՒ ԽՈՀԱՐԱՐԸ

Մի գրագետ խոհարար
Ժամ, աղոթքի սիրահար,
Շատ հոգեվախ, խիղճն արթուն
Վազեց գնաց գինետուն՝
Իր սանահոր քելեխին.
Իսկ պահապան տուն-տեղին
Դրեց կատվին աչքաբաց
Յեվ շատ, շատ ել մկնատյաց։
Գնաց... յեկավ,
Իր աչքն ընկավ
Խոհանոցի հատակին,
Կարկանդակի փշրանքին,
Խանում, խաթուն
Տնապահ կատուն
Տակառի տակ
Ենպես տաք, տաք
Վռնց ե խժռում լավից լավին՝
Նորատապակ վառեկ հավին.
— Ա՛յ դու ծակաչք, այ դու չտես,
Եդ հավի տեղ մեծ ցավս ուտես,
Ա՛յ անպատկառ, թռռ քո պատվին,—

Նախատում եր մարդը կատվին,
(Լաճն ով եր, հաճն համով եր)
Կար ժամանակ,
Վոր տան միակ
Կատուն եյիր ազնիվ ու հեզ.
Հիմա քեզ պես,
Այ բամբառակ,
Զկա մեկը խաղք-խայտառակ.
Վայ թե քիթդ հանես շեմքից,
Բա չեն ասի դուռ ու դրկից՝
Կատուն գող է...
Նա վոսոխ է...

Ինչպես գայլին չար ու անհաղ
Պետք չի թողնել վոչխարանոց,
Ճիշտ այնպես ել՝ կատվին տան բակ,
Վոչ թե միայն տան խոհանոց։
Այդ զավզակը,
Ավազակը
Այս տեղերի,
Այս թաղերի
Աղտն ու կեղտն է
Վարակ, ժանտախտ...

(Կատուն լսում, ուտում է նաղտ)
Այստեղ մեր մեծ բարոյախոս
Ճարտասանը այնքան դար-փոս
Գցեց իրեն ու սընգեց,
Մինչև կատուն կերավ, ծլկեց։



## ԹԱԹՈՒԼԻ ՔԱԼԱՃՈՇԸ

«Հարևան Ջան, հոգիդ սիրես
Մի քիչ ել կեր, մի՛ ափսոսիր»։
«Հարևան Ջան, շատ կուշտ եմ յես»։ —
«Մի ափսե ել. դու ինձ լսիր։
Շատ համեղ է քալաճոշը, ինձ հավատա»։
«Յերեք ափսե կերա արդեն»։
— «Ինչ խոսք է դա,
Թե ցանկություն ունես դու,
Անուշ արա, վերջացրու։
Ինչ ել լավն է քալաճոշը. բա յերեսին
Տես սաթի պես յուղը դեղին...
Դե, սիրելիս, դու իմ խոսքը մի կոտրիր,
Յուղոտ տեղից դու ընտրիր —
Կեր մի քիչ ել։ Դե՛, ա՛յ կնիկ, պատվիր
հյուրին»։
Եսպես պատվում եր Թաթուլն Ոհանին,
Վոչ հանգիստ տալիս, վոչ ել ժամանակ
Իր հարևանին,
Իսկ նա քրտինք եր թափում շարունակ։
Ճարը կտրած մի ափսե ել վերցրեց նա,
Ուժը լարեց անխնա,
Մաքրազարդեց։—«Այ դու կեցցես, դրացիս»։
Թաթուլն ասաց.—«Յես չեմ սիրում
զոռոզ մարդկանց.
Դե կեր, խնդրեմ, մի ափսե ել, սիրելիս»։
Խեղճ Ոհանը ահաբեկված,

Թեև շատ եր քալաճոշը նա սիրում,
Բայց դեռ չեղած մի եսպիսի նեղ տեղում,
Գլխարկն ու գոտին սեղմեց իր կրծքին
Յեվ ահը սրտում փախավ եղ տանից
Ու են որվանից
Եվ վոտք չդրեց Թաթուլի շեմքին։

## ԱՔԼՈՐՆ ՈՒ ՄԱՐԳԱՐՏԻ ՀԱՏԻԿԸ

Աղբակույտը քչչելիս,
Աքաղաղը մի մարգարտի հատիկ գտավ
Ու ասաց. «Ես ինչ դառավ,
Դատարկ բան է, յես իմ հոգիս.
Վոր հիմարն է սրան եսքան գին տալի,
Ճիշտ վոր ասեմ, գարու հատիկն ինձ ավելի
Պետք պիտի գար՝ թեև ենքան չի շլացնի,
կկշտացնի։
Տգետներն եվ՝ ինչից գլուխ չեն հանում,
Դատարկ բան են անվանում։

## ԱՂՎԵՍՆ ՈՒ ԽԱՂՈՂԸ

Հին առակ է—
Աղվեսի դունչը խաղողին
Չհասավ, ասավ՝ խակ է։
Սոված աղվես...



Մանի պարտեզ...
Տեսնի խաղող՝
Ո՞խ... արևկող
Հակինթ ճիթեր
Վերից կախ, կախ,
Ա՛յ թե կուտեր.
Աչքն եր տեսնում,
Դունչ չեր հասնում,
Եստեղ պուպուզ
Ենտեղ կուկուզ,
Ես վազի տակ,
Են վազի մոտ,
Վերջն՝ աչքե տես,
Բերնե կարոտ.
Խիստ սրտնեղած
Յելավ գնաց
Պարտեզից դուրս,
Հետն ասելով
—Մի խոսքով
Լավ է տեսքով...
Բայց խակ է, կանաչ է,
Ուտելու բան չե...
Բերան տաս՝
Ատամհարինք կստանաս։

## ԳԱՅԼԱՁՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Փորձանք է, յերբ ճաշ է յեփում կոշկակարը,
Իսկ նրա տեղ կոշիկ կարում խոհարարը։

Ատամը մեծգայլաձուկը իր խելքով
Մաքին դրեց զբաղվել արդեն կատվի արհեստով։
Յես չգիտեմ, նա կատվին եր նախանձում,
Թե ձուկ ուտելն եր իրեն խիստ ձանձրացնում,
Միայն գիտեմ՝ խնդրեց կատվին,
Վոր հետն իրեն վորսի տանի
Ու պահեստում մկներ բռնի։
«Բայց դու, հոգիս, ծանոթ ես եդ աշխատանքին,—
Գայլաձկան կատուն ասաց,—
Տես, սանամեր, քեզ խայտառակ չանես հանկարծ.
Զուր չի ասել առածը հին՝
«Ամեն մի գործ տուր վարպետին»։
«Եհ, բանիդ կաց, սանահեր Չան, մուկ ես ասել
Աքերին ենք մենք վորսացել»։
«Դե, շատ բարի, գնանք», — ասաց։ Դարան մտան։
Կատուն կուշտ-կուշտ կերավ ենքան,
Ապա գնաց, վոր սանամոր քեֆն իմանա։
Գայլաձուկն ել վողջ եր հազիվ, բերանը բաց,
Գետնին պառկած,
Առնետներն ել կրծել եյին պոչը նրա։
Տեսնելով, վոր գործը վեր ե նրա ուժից,
Սանահերը խեղճին գցեց ջուրը նորից։
Քո տեղն ե հենց, ա՛յ գայլաձուկ,
Ես քեզ խրատ՝
Խելոք լինես սրանից դեն
Ու չգնաս մուկ վորսալու։





## ԳԱՅԼԱՁՈՒԿԸ

Գանգատ տվին դատարանին, վոր լճակում
Գայլաձկան ձեռից չկա ճար ու պրծում,
Մեծ քանակով փաստեր կային։
Ինչպես հարկն եր՝ հանցավորին
Դատի բերին մի մեծ դաշտում,
Ներկայացրին դատողներին,
Վոր արածում եյին եզտեղ մոտիկ դաշտում։
Սակայն նրանց անունները հայտնի եյին։
Դրանք եյին՝ յերկու եշ,
Յերկու յաբու, և յերկու, թե յերեք ոյծ։
Իսկ վորպեսզի ամբողջ դատը լինի կարգին՝
Դատախազի գործը տվին մեր աղվեսին։
Բայց ամեն տեղ լուր կար համառ՝
Գայլաձուկը ձուկ ե բերում նրա համար։
Սակայն ճիշտ վոր անկեղծ եյին դատողները։
Են ել ասենք, վոր են ձկան արարքները
Չեր կարելի թագուն պահել ես անգամին։
Ել ճար չկար՝ հրաման տվին,
Վոր խայտառակ պատիժ տան են հանցավորին,—
Իբրև խրատ իսկույն հանել կախաղան։
«Մեծապատիվ դատավորներ,—աղվեսն ասաց,—
Քիչ ե կախել։ Յես մի պատիժ տամ նրան,
Վոր յերբեք մեզ մոտ չի տեսնված,
Յեվ վոր խրատ լինի սաստիկ՝
Պետք ե գետում նրան խեղդել»։
— «Շատ գեղեցիկ»
Բղավեցին դատողները, վորոշեցին,
Գայլաձկան։ գետ գցեցին։



## ԿԱՐԱՊԸ, ԽԵՑԳԵՏԻՆԸ ՅԵՎ ԳԱՅԼԱՁՈՒԿԸ

Ինչքան կուզեն՝ իրենց տանջեն,
Յերբ ընկերներն համերաշխ չեն
Ոգուտ չունեն բռնած գործից.
Ա՛յ, մի առակ կյանքի փորձից,
Թեև անցուկ,
Բայց վոչ մոռցուկ։

Մի կարապ, մի խեցգետին, մի գայլաձուկ
Բարձած սայլը տեղից քաշել ուզեցին
Յեվ յերեքով յեկան սայլին լծվեցին,
Ինչ են անում,
Ինչ չեն անում,

Սայլը տեղից հո չի շարժվում,—
Շատ թեթև ե բեռը թվում,
Բայց կարապը վեր ե թռնում
Խեցգետինը քաշում ե յետ.
Գայլաձուկն ել հո դեպի գետ.
Ո՛վ ե արդար, ո՛վ մեղավոր,
Մենք չգատենք։ Բանն այն ե, վոր

Մինչև այսոր
Թե սայլ, թե բեռ
Նույն տեղն են դեռ։

## ՄՈՒԿՆ ՈՒ ԱՌՆԵՏԸ

«Հարևանս, լսել ես դու բարի համբավ,—
Ներս վազելով մուկը ասաց առնետին,—
Առյուծն, ասին, ճանկն է գցել մեր կատվին.
Ես անգամին մեր հանգստի ժամը հասավ»։
«Հոգիս, շատ մի ուրախացիր,—
Առնետն ասաց հարևանին,—
Դատարկ հուսներ մի ունեցիր։
Թե վոր գործը հասնի ճանկին,
Առյուծը վողջ հո չի մնա.
Կատվից ուժեղ գազան չկա»։
Շատ եմ տեսել, դուք ել գիտեք եսպես մի բան՝
Թե վախկոտը վախենում է մեկից սաստիկ,
Կարծում է, թե բոլոր մարդիկ
Իր աչքով են նայում նրան։

## ՉՐԱՂԱՑՊԱՆԸ

Զուրը ծակեց Չրաղացի ամբարտակը,
Բայց սկզբում այնքան մեծ չեր եղ փորձանքը։
Պետք եր հոգ տանել
Ու անցքը փակել։
Բայց ինչ եք կարծում,
Մեր Չրաղացպանը չի ել մտածում,
Զուրն ել հոսում է կարծես սափորից,
Ու քանդում անցքը, քանդում է նորից։
«Է՛յ Չրաղացպան, դե ուշք դարձրու,

Գործի անցիր, խելքի յեկ դու»։
Ջրաղացպանն էլ ասում է թե՝ «Եհ, անաշեն,
Ինձ ծով ջրեր հարկավոր չեն,
Ինչքան գնա՝
Բավականին ջուր կմնա»։
Յեվ նա քնած է, իսկ նրա բախտից
Ջուրը հոսում է կարծես կարասից։
Յեվ յեկավ ահա են փորձանքը մեծ՝
Քարը կանգ առավ, ջրաղացը կանգնեց,
Ու ջրաղացպանը վայ տվեց գլխին,
Ուզում է ջուրը հետ պահի կրկին.
Յեկավ ու նայեց քանդվածը նորից,
Տեսավ հավերը խմում են ջրից։
«Անպիտաններ,—բղավեց նա,—հավեր հիմար,
Առանց ձեզ էլ ջուր չեմ ճարում յես ինձ համար,
Յեղած ջուրն էլ խմում եք ու պրծացնում»։
Ու խփում է նրանց եղտեղ պառկեցնում։—
Իսկ դրանից վոչ մի ոգուտ այս մարդուն—
Առանց հավի, առանց ջրի գնաց տուն։

## ՀԵՏԱՔՐՔԻՐԸ

«Բարաջողում։ Վոր տեղ եյիր, բարեկամ»։
«Թանգարանում ման եմ յեկել յերեք ժամ»։
Ենքան զարմանք բաներ տեսա ենտեղ յես,
Վոր չեմ կարող, իսկապես,
Տեսածներս պատմել քեզ։
Հրաշքների դա մի տուն է իսկական,
Են բոլորը կարծես խաղ է բնության։
Ել ի՞նչ ձևի գազաններ ու թռչուններ կան,
Ի՞նչ թիթեռներ ու բզեզներ—
Բլոճ, պիծակ ու մժեղներ...
Մեկը կարծես զմրուխտ լինի, մյուսը՝ մարջան։
Ձատիկներ կան այնքան մանրիկ,
Գնդասեղի գլխից ել են նրանք փոքրիկ»։
«Հը, փիղը վո՞նց եր, նրան ել տեսա՞ր,
Յես կարծեմ՝ աչքիդ յերեվաց մի սար»։
«Ենտեղ փիղ կա՞»։—«Բա չկա՞»։
«Ներողություն, փիղն աչքովս չնկավ»։

## ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌԸ

Շոգին՝ մի գառ յեկավ առվից ջուր խմի,
Բայց հանդիպեց փորձանքի՝
Եղ մոտերքում սոված գայլը քաշ եր գալիս։
Տեսավ գառին և ուզում եր վորս անի,
Ապա գործին որինական ձև տալով
Բղավեց նա—«Վո՞նց ես, լպիրշ, հանդգնում
Իմ ջուրը պարզ
Պիղծ դնչովդ պղտորել,
Մեջը խառնել տիղմ ու ավազ։
Եղ վարմունքիդ համար ես,
Գլուխդ կանեմ յերկու կես»։
«Յեթե թույլ տա իմ տեր գայլը պայծառափայլ,
Կհանդգնեմ զեկուցել, վոր մի հարյուր քայլ
Դեպի ցած պայծառափայլությունից նորին՝

Կանգնած եմ յես Ջրի ափին,
Յեվ զուր ե նա բարեհաճում մեղադրել,
Զուրն ի հարկե, չեմ եվ կարող պղտորել»։
«Յես, ուրեմն, սուտ եմ ասում.
Եվ եսպիսի հանդգնություն կա աշխարհում։
Յես հիշում եմ, այ, անպիտան, են մյուս տարին
Մի անգամ եվ եստեղ դիպար դու իմ պատվին։
Յես եդ բանը չեմ մոռացել, բարեկամ»։
«Վոդորմա ինձ, մի տարու եվ դեռ չկամ»—
Ասաց գառը։—«Դե, հիշում եմ, յեղբայրդ եր»։
«Յեղբայր չունեմ»։—«Դե խնամիդ, քավորդ եր,
Ու, մի խոսքով, մեկն ու մեկը քո ազգից։
Հենց դուք լինեք, հովիվ լինի, կամ եվ շուն,
Միշտ իմ չարն եք կամենում,
Յեվ կարենաք, դուք միշտ վնաս կտաք ինձ,
Եդ մեղքերը կպահանջեմ քեզանից»։
«Իմ մեղքն ինչ ե»։—«Լռիր, լակոտ, հերիք լսեմ,
Գործս պրծավ, վոր մեղքերդ մեկ-մեկ թվեմ.
Քո մեղքն են ե, վոր սոված եմ, այ դու ցանցառ»։
Ու խեղճ գառին նա քաշ տվեց տարավ անտառ...

## ՍՏԱԽՈՍԸ

Հեռու տեղերից վերադառնալով
Մի ազնվական (գուցե և իշխան).
Բարեկամի հետ դաշտում ման գալով,
Գլխի յեկածն եր պատմում պարծանքով.
Ճիշտ խոսքերին ստեր խառնում անսահման։

«Զե,—ասում եր,—ինչ վոր տեսա
Եվ չեմ տեսնի յես իրոք,
Ինչքան խղճուկ յերկիր ե սա՝
Մեկ շատ ցուրտ ե, մեկ եվ շոգ,
Մեկ ամպամած, մեկ արևոտ ու պայծառ։
Այ, իսկ ենտեղ մի դրախտ ե փառավոր,
Վոր հիշում եմ՝ հոգիս ցնծում ե կայտառ—
Վոչ քուրք ե պետք, վոչ եվ մոմ ե հարկավոր,
Դար վոր անցնի՝ գիշերվա մութ չես տեսնի
Տարին բոլոր որն ե ժպտում մայիսի...
Ենտեղ վոչ վոք վոչ տնկում ե, վոչ ցանում,
Բայց վոր տեսնես՝ ինչ ե բուսնում ու հասնում.
Այ, Հռոմում, վարունգ տեսա, որինակ...
Տեր իմ աստված,
Մինչ հիմա եվ աչքիս դեմն ե շարունակ։
Կհավատամ։ Սարի չափ եր անկասկած»։
«Այ քեզ հրաշք»,—ընկերն ասաց,—
Շատ հրաշքներ կան աշխարհում,
Բայց շատերը չեն նկատում։
Մենք ինքներս մոռենում ենք մի հրաշքի,
Վոր յես գիտեմ չի պատահել վոչ վոքի,
Կհաստատեմ վոր սուտ չի։
Այ, նայիր դու մեր ես գետի կամրջին,
Ուր տանում ե մեր ուղին.
Թեև տեսքով նա կամուրջ ե մի չնչին,
Բայց հրաշալի մի հատկություն նա ունի՝
Ստախոսը սիրտ չի անում, վոր անցնի—
Մինչև կեսը նա չհասած

Խորտակվում է ու ընկնում ցած։
Իսկ ով ստեր չի ասում, վոր ուզենա
Թեկուզ կառքով կգնա»։
«Իսկ եդ գետը խոռն է արդյոք և ինչքան»։
«Դե, ծանծաղ չի նա ենքան։
Տես, բարեկամ, ինչեր չկան աշխարհում։
Են Հռոմի վարունգն անշուշտ մեծ է շատ,
Մի սարի չափ եյիր, կարծես, դու ասում»...
«Եհ, սար ել չե, բայց կլիներ մի տան չափ»։
«Դե դու արի ու հավատա...
Ասենք, ճիշտ է, հրաշք է դա.
Իսկ կամուրջը, վոր մենք կանցնենք վրայով,
Ստախոսը վրան կանգնել չի կարող։
Հենց ես գարուն յերկու գրող, դերձակը
Զուրը ընկան (գիտե ամբողջ քաղաքը)։
Քո վարունգը տան մեծության,
Թե վոր ճիշտ է, մի զարմանք է իսկական»։
«Եհ, ենքան ել մեծ բան չի,
Իմացիր, վոր հրաշքներ կան շատ տարբեր՝
Մեր եստեղի պալատների նման չի։
Ի՞նչ տներ...
Յերկու հոգի, են ել ստիպված, հազիվ մտնեն,
Ու վոչ նստեն, վոչ կանգնեն»։
«Եղպես լինի, բայց, ճիշտն ասած,
Քո վարունգը մի հրաշք է չտեսնված,
Յերբ նրա մեջ տեղ են գտնում յերկուսով։
Բայց զբաղվենք կամուրջով՝



Դեռ մի հինգ քայլ ստախոսը առաջ չանցած
Ընկնում է ցած։
Քո Հռոմի են վարունգը, վոր ասիր»...
Ստախոսը խոսքը կտրեց—«Դե, լսիր՝
Լավ կլինի եդ կամրջից ձեռ վերցնենք
Անցնելու տեղ վորոնենք»։

## ՕԱՐՅԱԿԸ

Փոքրուց ինչ վոր սարյակիկ,
Սովորել եր յերգել վորպես դեղձանիկ,
Դեղձանիկ ել ծնվել եր հենց ինքը, կարծես,
Զվարճացնում եր վողջ անտառը ձայնով պես-պես,
Յեվ բոլորը գովում եյին սարյակին։
Ես վիճակը շատ շատերին բախտ կթվար։
Բայց նա լսեց, վոր գովում են սոխակին
(Սարյակը շատ նախանձոտ եր դժբախտաբար).
Մտածում է—«Բարեկամներ, դուք դեռ կացեք,
Հիմա ել յես
Պիտի յերգեմ սոխակի պես»։
Յեվ, իսկապես, գլեց մի յերգ,
Ինչ վոր ուրիշ հանգով սակայն՝
Մեկ ճստում է, խռպոտում,
Մեկ մկկում ուլի նման,
Կլկլացնում կոկորդում
Կատվի նման մլավում,
Ու մի խոսքով
Նա իր յերգով

Փախցրեց բոլոր թռչուններին։
Ոգուտդ ինչ է, անգին սարյակ,
Լավ է յերգես հաջող, վորպես մի դեղձանիկ,
Քան վատ յերգես իբրև սոխակ։

## ԳԱՅԼԸ ՇՆԱՆՈՑՈՒՄ

Գայլը մի մութ գիշերով
Մսահոտի քշվելով
Հնկավ վոչ թե վոչխարանոց,
Այլ շնանոց։

Հոտն առնելով չքոտի,
Շնանոցը թը՛ռ վոտի
Գայլ ու շներ կողք-կողքի,
Բակը փոխվեց դժոխքի։

Վառնոց, հաջոց, գոչ, գոչյուն...
Պահակներն են զիլ կանչում.
— Տղերք, գոր... գող է յեկել,
Գոմի դուռը շուտ փակել.
Զենք ու ճրագ...

Կարկտի պես ցած տեղացին
Թուր, հրացան, բիր ու կացին.
Տրաք... տրաք.
Վառվեց ճրագ...
Դուռը բացին.
Հին դրացին՝
Գայլն անառակ

Մռայլ, մթին մեջքը պատին,
Մազ-մուզ բիզ-բիզ,
Անկեռ-հաստ վիզ.
Ատամները կրճատացնում
Յեվ աչքերով սարսափեցնում
Իրա չորս դին,

Շրջապատին։
Ա՛յ, ինչն ե վատ—
Ինքը մի հատ,
Շները շատ։
Տեսնելով այդ՝
Խորամանկը,
Վոր փրկի կյանքը,
Բանակցության տուտը բացեց.
Յեվ այսպես նա խոսքն սկսեց.
—Յես յեկել եմ հաշտվելու, վոչ թե
կռվի,
Սուտ ասողի լեզուն լռվի.
Թշնամու դեմ իրար ձեռք տանք,
Հոտի համար մահ ու մեռ տանք։
Անցյալն ե անց, անցուկ, մոռցուկ,
Յես թափելով անկեղծ արցունք՝
Ձեզ տալիս եմ գայլի յերդում,
Վոր յես... «Հերիք, ա՛յ հարևան,—
Գլխավորապետն ե խոսքն ընդհատում,—
Գլխիս կարդաս գայլ-շարական,
Ինչքան կուզես լեզու թափի,

Կաստամանով*) ինձ չես խաբի։
Թե քո մազը նոր չալել է,
Ինձ հո արդեն սիպտակել է.
Յես լավ գիտեմ գայլի բնույթ.
Յեվ էլ ունեմ լավ սովորույթ.
Գայլի մորթին դեռ չմաշված՝
Յես գայլի հետ չեմ հաշտված.
Ասաց...
Գայլի վրա շները բաց...

## ԽՈԶՆ ՈՒ ԱԳՌԱՎԸ

Մի դարավոր կաղնու տակ
Խոզը ագահ ու անհագ
Ենքան կաղին գխտվեց,
Վոր ցած ընկավ ու փռվեց.
Զարթնեց քնից ու տակից
Ծառը փորեց արմատից։
—Ի՞նչ ես անում, ա՛յ անգետ,—
Ագռավն ասավ վերևից.—
Խաղ ես անում ծառի հետ,
Կչորանա արևից։
—Չորանում է՝ չորանա,
Ինձ ի՞նչ ոգուտ՝ զորանա.
Միայն կաղին ունենամ,
Ուտեմ, ուտեմ, գիրանամ։

*) Կաստաման—գայլի շարական։

—Ա՛յ ապերախտ կենդանի,
Ով քեզ նման վիզ ունի՝
Իր կույր աչքով չի տեսնի,
Վոր կաղինը հյութալի
Լոկ այս ծառն է ձեզ տալի.—
Ագռավն ասավ խոզուկին՝
Են կախ գլուխ կուզիկին։

## ՆԱՊԱՍՏԱԿԸ ՎՈՐՍԻՆ

Մի մեծ խմբով հավաքվեցին
Գազանները՝ արջ վորսացին,
Ու, խեղդելով բաց դաշտում,
Իրար միջև բաժանում են են արջին։
Ամեն մեկը իր համար է աշխատում,
Նապաստակն էլ ձեռք է գցում ականջին։
«Ե՛յ դու շլիկ,—ասին նրան,—
Եդ վորտեղից մեջ ընկար,
Դու մեր վորսին յոթը յեղար»։
Նապաստակը պատասխանեց.—«Ե, ախպեր ջան,
Բա անտառում յես չե՞յի, վոր վախեցրի
Ու դեպի դաշտ ուղիղ ձեր դեմ փախցրի
Ես խեղճ արջին»։
Նապաստակի պարծենալը պարզ եր ենքան,
Բայց դրանով նրանք ենպես զվարճացան,
Վոր մի կտոր են ականջից նրան տվին։



## ԱՐԿՂԻԿԸ

Պատահում է յերբեմն մեզ
Իմաստություն և աշխատանք տեսնել ենտեղ,
Ուր պետք է, վոր գլխի ընկնել
Յեվ ուղղակի գործի անցնել։

Վարպետի մոտից բերին մի արկղիկ։
Իր տեսքով արկղիկն աչքի յեր ընկնում։
Նայում են բոլորն արկղին գեղեցիկ։
Հնարագետ մի մարդ սենյակ է մտնում,
Նայում արկղիկին։—«Գաղտնիք ունի դա,—
Ասում է իսկույն,—կողպեք էլ չկա,
Իսկ յես կբացեմ, յես կասկած չունեմ,
Գաղտնիքը գիտեմ, իսկույն բաց կանեմ։
Հնարքներ շատ են ձեռքիցս գալիս»։
Ու արկղիկը վերցրեց ահա,
Շուռ է տալիս չորս կողմի վրա,
Զոռ է տալիս իրեն խելքին,
Մատը դնում մեկ ճարմանդին, մեկ էլ մեխին։
Մարդիկ նայում աչքի տակով
Գլուխները թափ են տալիս կասկածանքով,
Ու փսփսում, ծիծաղում են քթի տակին,
Յեվ չորս կողմից հա դիպչում է իր ականջին՝
«Չեղավ, դա չի»։ Խեղճը դուրս է գալիս կաշուց.
Քրտնեց, քրտնեց և վերջապես, հոգնեց արդեն,
Ու արկղիկից նա ձեռ քաշեց։
Իսկ արկղիկը բացվում եր հենց իրեն-իրեն։

# ԱՂՎԵՍԸ

Ցուրտ ձմռանը, գյուղին մոտիկ, լուսածեգին,
Մեր աղվեսը ջուր եր խմում սառցածակից։
Մինչ այդ—բախտ եր, թե սխալանք (բանն եդ հո չի)—
Աղվես ապոր պոչի ծայրից
Մի քիչ թրջվեց, կպավ սառցին։
Կարելի յեր գործը ուղղել, ցավը մեծ չեր,
Մի քիչ ուժեղ ձգել պետք եր
Ու կորցնել մեկ կամ յերկու տասնյակ մազեր,
Ու մինչ մարդիկ վեր կկենան,
Շուտ հավաքել փասա-փուսան։
Բայց ես պոչը վոնց փչացնես՝ բրդոտ մի պոչ,
Վոսկեվորիկ ու լայնափունջ։
Պետք է սպասել՝ ժողովուրդը դեռ կքնի—
Մինչ այդ գուցե գոլը կընկնի,
Պոչն ել ծակից դուրս կպրծնի։
Սպասեց, սպասեց, պոչն ավելի սառչում է դեռ։
Տեսավ, ըհը՛ որը բացվեց,
Մարդիկ յելան, ու լսվում են հրեն ձայներ...
Խեղճ աղվեսի լեղին պատռեց.
Մեկ ընկավ դես, մեկ ընկավ դեն,
Սառցածակից չի կարենում պոկվել արդեն։
Նրա բախտից գայլն է գալիս։
«Իմ բարեկամ, սանահերս, այ սիրելիս,—

Կանչեց,—փրկիր հասել ե իմ վերջն ահա»։
Սանահերը կանգ առավ
Ու աղվեսի փրկությունը հանձն առավ։
Դրա համար մի պարզ միջոց ուներ նա,
Իսպառ կրծեց նրա պոչը արմատից,
Ու առանց պոչ մեր հիմարը վազեց, գնաց,
Յեվ ուրախ եր, վոր իր մորթին իրեն մնաց։
Ինձ թվում ե միտքը պարզ ե ես առակի,
Թե չափսոսեր մի քիչ պոկել մազն իր պոչի՝
Իր պոչից ել չեր զրկվի։

## ՏՐԻՇԿԱՅԻ ԲԱՃԿՈՆԸ

Տրիշկայի բաճկոնն արմունկներում կտրտվեց,
Ել շատ յերկար նա միտք չարեց։ Ասեղ վերցրեց
Ու թևքերից քառորդի չափ կտրեց, կարեց
Արմունկներին։ Բաճկոնն ելի նույնն ե, կարծես։
Ձեռքերն, ասենք, մի քառորդով մերկ մնացին։
Դե ինչ կա վոր, լինի եսպես։
Բայց բոլորը ձեռ են առնում մեր Տրիշկային։
Տրիշկան ասաց.—«Հիմար չեմ յես,
Ես ցավին ել կանեմ մի ճար»։
Ու թևքերը նախկինից ել կընեն յերկար»։
Բաս, Տրիշկան հո պակաս մարդ չի՝
Կտրեց քղանցքն ու փեշերը
Ու նրանցով յերկարացրեց իր թևքերը։
Յեվ ուրախ ե Տրիշկան սաստիկ,



Վոր ենպիսի մի բաճկոն ե հագնում հպարտ,
Վորի հանդեպ կազմոլներն*) ել յերկար են շատ։
Հենց նույն ձևով, յերբեմնակի տեսնում եմ յես՝
Պարոններ կան, խճրճում են գործերն եսպես,
Հետո սարքում
Ու Տրիշկայի բաճկոնով են միշտ զբոսնում։

---

*) Կամզոլ—կարճ վերնազգեստ։

# ՑԱՆԿ


1. Համերգ—փոխ. Խնկո ապեր . . . . . 5
2. Գայլն ու կռունկը—փոխ. Խնկո ապեր . . . . . 8
3. Կկուն և աքլորը—փոխ. Խնկո ապեր . . . . . 10
4. Կապիկն ու ակնոցները—փոխ. Խնկո ապեր . . . . . 13
5. Գայլն ու կատուն—փոխ. Խնկո ապեր . . . . . 14
6. Կապիկն ու հայելին—փոխ. Խնկո ապեր . . . . . 16
7. Փիղն ու շնիկը—փոխ. . . . . 17
8. Ճպուռն ու մրջյունը—փոխ. Խնկո ապեր . . . . . 18
9. Գորտն ու կովը—փոխ. Խնկո ապեր . . . . . 21
10. Ագռավը ու աղվեսը—փոխ. Խնկո ապեր . . . . . 23
11. Կատուն ու խոհարարը—փոխ. Խնկո ապեր . . . . . 36
12. Թաթուլի քալաճոշը— . . . . . 29
13. Աքլորն ու մարգարտի հատիկը— . . . . . 30
14. Աղվեսն ու խաղողը—փոխ. Խնկո ապեր . . . . . 30
15. Գայլաձուկն ու կատուն— . . . . . 31
16. Գայլաձուկը— . . . . . 34
17. Կարապը, խեցգետինը և գայլաձուկը—փոխ. Խնկո ապեր . 35
18. Մուկն ու առնետը— . . . . . 36
19. Ջրադացպանը— . . . . . 36
20. Հեռաքրքիրը— . . . . . 38
21. Գայլն ու գառը— . . . . . 39
22. Ստախոսը— . . . . . 40
23. Սարյակը— . . . . . 43
24. Գայլը շնանոցում—փոխ. Խնկո ապեր . . . . . 44
25. Խոզն ու ագռավը—փոխ. Խնկո ապեր . . . . . 46
26. Նապաստակը վորսի— . . . . . 84
27. Արկղիկը— . . . . . 49
28. Աղվեսը— . . . . . 50
29. Տրիշկայի բաճկոնը . . . . . 52

Կազմեց Ա. Հայրյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Գլավլիտի լիազոր՝ Ղ – 3603. Հրատ. 4507.
Պատվեր 191. Տիրաժ 3000.
Թուղթ 62×94. Տպագրական $3^1/_2$ մամ.
Մեկ մաժուլում 24768 նշան.
Հեղինակային $1^3/_4$ մամ.
Հանձնված է արտադրության 20 փետրվարի 1938 թ.
Ստորագրված է տպագրության 28 մարտի 1938 թ.
Գինը 3 ռ. 50 կ.
Կազմը — 50 կ.

Գետհրատի I տպարան, Երևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0395241

3868